ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 286

17 հոկտեմբեր 2017թ.

ՍԻՐԱՆՈՒՇ ԳԱՐԵԳԻՆԻ ԲԱԲԱՅԱՆԻՆ ՀԱՆԳՍՏԻ ՏՆԱԿԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել Սիրանուշ Գարեգինի Բաբայանիը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող տարածքում հանգստի տնակ կառուցման աշխատանք կատարելու համար շինարարության թույլտվություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Սիրանուշ Գարեգինի Բաբայանին տալ հանգստի տնակի կառուցման աշխատանքի շինարարության թույլտվություն:
2. Քաղաքապետարանի քաղաքաշինության գլխավոր մասնագետին ապահովել ավտոտնակի կառուցման աշխատանքների սկսման համար, գործող կարգին համապատասխան անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպում և պատշաճ հսկողություն:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 287

19 հոկտեմբեր 2017թ.

ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 281 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 2017 թվականի հոկտեմբերի 12-ի <<Հողամասի սահմանների ուղղման մասին>> թիվ 281 որոշումը լրացնել նոր պարբերություն՝ <<Ճանաչել Վահե Ալմոյանի ,Էդուարդ Մելիքյանի և Հովհաննես Աբրահամյանի սեփականության իրավունքը՝ ուղղման հետևանքով առաջացած 27,79 ք.մ. մակերեսով հողամասի նկատմամբ>>:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 288

19 հոկտեմբեր 2017թ.

ԱՐՄԱՆ ՀԱԿՈԲԻ ԴԱՎՈՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշումով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2015 թվականի հուլիսի 02-ի թիվ 34-Ն, 2016 թվականի փետրվարի 19-ի թիվ 15 որոշումները, ինչպես նաև 2015 թվականի օգոստոսի 19-ի և 2015 թվականի նոյեմբերի 06-ի <<Աճուրդը և կրկնաճուրդը չկայացած համարելու մասին>> արձանագրությունները և Արման Հակոբի Դավոյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արման Հակոբի Դավոյանին ուղղակի վաճառքով օտարել քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 18/5 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, համայնքի սեփականություն համարվող, հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողերից 0,1266 հա մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 24062015-07-0055) մեկնարկային գնով՝5 727 384(հինգ միլիոն յոթ հարյուր քսանյոթ հազար երեք հարյուր ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Արման Հակոբի Դավոյանի հետ կնքել հողի օտարման պայմանագիր:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 289

19 հոկտեմբեր 2017թ.

ՀԱԿՈԲ ՍԱՄՍՈՆԻ ԴԱՎՈՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 8-րդ կետի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշումով և հիմք ընդունելով Ծաղկաձոր համայնքի ավագանու 2015 թվականի հուլիսի 02-ի թիվ 34-Ն, 2016 թվականի փետրվարի 19-ի թիվ 15 որոշումները, ինչպես նաև 2015 թվականի օգոստոսի 19-ի և 2015 թվականի նոյեմբերի 06-ի <<Աճուրդը և կրկնաճուրդը չկայացած համարելու մասին>> արձանագրությունները և Հակոբ Սամսոնի Դավոյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հակոբ Սամսոնի Դավոյանին ուղղակի վաճառքով օտարել քաղաք Ծաղկաձոր, Տանձաղբյուրի փողոց, թիվ 18/4 հասցեում գտնվող, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին չդասվող, համայնքի սեփականություն համարվող, հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողերից 0,1266 հա մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական N 24062015-07-0062) մեկնարկային գնով՝5 727 384(հինգ միլիոն յոթ հարյուր քսանյոթ հազար երեք հարյուր ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հակոբ Սամսոնի Դավոյանի հետ կնքել հողի օտարման պայմանագիր:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 290

20 հոկտեմբեր 2017թ.

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 777-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ծաղկաձորի համայնքապետարանի և Արտակ Մադոյանի միջև 2017թվականի հոկտեմբերի 20-ին կնքված <<Ծառայությունների վճարովի մատուցման>> պայմանագրի ժամկետը երկարացնել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԱՐԹՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ